

# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## ԱԼԻՌԵԶԱ ԲՈՆՅԱԴԻ

ԵՐԳԻԾԱՆՔԻ ԲՆՈՒՅԹԸ ԵՆ ԱՌԱՆՁՆԱԴՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆՏՈՆ ՉԵՆՈՎԻ  
ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ

Ժ. 01. 04 - «Գրականության տեսություն» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի  
հայցման ատենախոսության

## Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Ե Ր Ե Վ Ա Ն - 2012

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Ս. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**ԱՎԵՏԻՍՅԱՆ ԶԱՎԵՆ ՎԱՍԻԼԻ**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**ԷՂՈՅԱՆ ՀԵՆՐԻԿ ԱՆՏՈՆԻ**

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

**ԱԹԱՆԵՍՅԱՆ ԱՇԽԵՆ ՍԱՄՍՈՆԻ**

Առաջատար կազմակերպություն՝

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական

համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2012 թ. նոյեմբերի 28-ին՝ ժամը 14<sup>30</sup>-ին, ԵՊՀ-ում գործող՝ ԲՈՂ-ի գրականագիտության 012 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ ք. Երևան 25, Աբովյան 52<sup>ա</sup>, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, թիվ 202 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2012թ. հոկտեմբերի 27-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝  
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**ԱԼ. Ա. ՄԱԿԱՐՅԱՆ**

## **ԹԵՄԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Ատենախոսության մեջ քննության են առնվում Ա. Պ. Չեխովի երգիծանքի բնույթն ու արտացոլման ձևերը: Չեխովի երգիծական պատմվածքները, վոդեվիլները, դրամաները, ինչպես նաև դրանց գեղարվեստական միջոցներն ու գործիքները կարևոր հիմք հանդիսացան նոր ոճի երգիծական ստեղծագործությունների արարման համար: Ատենախոսության մեջ ուշադրություն է դարձվում նաև Չեխով արձակագրի, դրամատուրգի աշխարհայացքի ձևավորման ու զարգացման ընթացքի վրա: Չեխովից առաջ ռուսական գրական ու հասարակական մամուլի էջերը լի էին գաղափարագուրկ պատմվածքներով, մասնավորապես՝ վոդեվիլներով, որոնք պարզապես ֆրանսիական նույնանուն ժանրի պարզունակ ընդօրինակումներ էին, ունեին սոսկ ժամանցային նշանակություն:

Այս ամենը տեղի էր ունենում այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ Ռուսաստանի գրական աշխարհում մոլեգնում էր անողոք գրաքննությունը: Ժամանակի ընթերցողն ու հանդիսատեսը կարդում, դիտում էր միայն այն ստեղծագործությունները, որոնք պարտադրվում էին պաշտոնական գրաքննության կողմից: Յենց այս ժամանակաշրջանում էր, որ ասպարեզ եկավ բացառիկ տաղանդի տեր արձակագիր ու դրամատուրգ Չեխովը, ով իր նոր և նորովի գրականությամբ ու արվեստով արմատապես փոխեց երգիծական գրականության զարգացման ընթացքը, որով բացահայտվում և քննադատվում էր ժամանակի իրականության դրվածքը, սոցիալական վիճակն ու կենսակերպը:

Չեխովի կարճ և սրամիտ պատմվածքներում, դրամաներում, ինչպես հայելու մեջ, երևում էին հասարակական կյանքի այն արատները, որոնք առկա էին այդ ժամանակներում: Ընթերցող հասարակության աչքի առաջ ի հայտ էին բերված տարբեր խավերին պատկանող երգիծական կերպարներ, որոնք մինչև այդ բացակայում էին գրականության մեջ:

Բարեբախտաբար, սրանով չսահմանափակվեցին Չեխովի ստեղծագործական որոնումները: Նա ստեղծեց մեծ կտավի երգիծական դրամաներ («Երեք քույրեր», «Բալենու այգի՛ն», «Ճայը», «Քեռի Վանյա») և ուրիշ այլ գործեր, որոնցով ամբողջանում է ռուս մեծ գրողի գրական ժառանգության համապատկերը: Այս գործերում Չեխովը խոսում էր ժողովրդի լեզվով և հոգով: Նրա երկերը բնույթով պարզ էին, բայց ոչ պարզունակ, բովանդակությամբ ու գաղափարներով խորն էին, բայց և հասանելի, ազդեցիկ: Այսպիսին էին Չեխովի ստեղծած գրականության բնույթն ու թեմատիկան, գեղարվեստական մտածողությունն ու աշխարհայացքը:

## **ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Հայտնի է, որ ժամանակակից աշխարհի շատ դրամատուրգներ և արձակագիրներ Չեխովի ստեղծագործությունների հիման վրա գրել են տարբեր գործեր, որոնց մեջ կարելի է տեսնել չեխովյան աբսուրդի գրականության և դրան յուրահատուկ գրելաոճի ընդգծված հետքեր: Ռուս և արևմտյան ճանաչված ռեժիսորներ, գրականագետներ ու արվեստագետներ մինչ այսօր անդրադառնում են Չեխովի ստեղծագործություններին և դրանց հիման վրա գրում տարբեր ժանրի ու բնույթի ուսումնասիրություններ, մենագրություններ, հոդ-

վածներ: Ըստ էության մեր աշխատանքը այդ երևույթի դրսևորման օրինակներից մեկն է:

Չեխովի երգիծական դրամաները թարգմանվում և բեմադրվում են աշխարհի տարբեր երկրների թատրոններում, ինչը խոսում է այն մասին, որ մեծատաղանդ դրամատուրգի գործերը շարունակում են ծառայել ժամանակակից գրականության ու արվեստի զարգացման ընթացքին: Չեխովը բացառիկ է մարդկային ներաշխարհի խորքերը բացահայտելու մեջ, այդ առումով էլ նրա ստեղծագործությունները և՛ արդիական են, և՛ հեռանկարային:

## **ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՈՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Չեխովի երգիծական գրականության ուսումնասիրությունը մասնագետներից պահանջում է գրողի տարբեր ժանրերին և դրանցում ներկայացված տարբեր թեմաներին վերաբերող գրականագիտական և թատերագիտական լրջմիտ ուսումնասիրություններ:

Ներկա ատենախոսության նպատակն է Չեխովի ստեղծագործությունները քննության առնել գրականության տեսության հայացքով, հատուկ ուշադրություն դարձնել չեխովյան երգիծանքի բնույթին և դրսևորման ձևերին: Այս նպատակով և ուսումնասիրվող նյութի թելադրանքով էլ պայմանավորված են աշխատանքի և՛ կառուցվածքը, և՛ հարցադրումների բնույթը:

## **ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿԱՆ ՈՒ ՍԵԹՈՂԱԿԱՆ ՀԻՄՔԸ**

Աշխատանքի տեսական ու մեթոդական հիմքը Չեխովի գրական և արտագրական գործերն են: Ատենախոսության մեջ այս ստեղծագործությունները ներկայացվում են քննական և վերլուծական մեթոդով: Չեխովի տեքստային աղբյուրները մենք կարդացել ենք պարսկերեն լեզվով (Իրանում Չեխովի հիմնական գործերը թարգմանված են պարսկերեն): Աշխատանքը ամբողջական և լիարժեք դարձնելու համար թարգմանչի միջոցով հնարավորին չափով ծանոթացել ենք ռուս չեխովագետների աշխատություններին, որոնք մեզ համար ուղղորդիչ նշանակություն են ունեցել: Ի լրումն այս ամենի՝ բնագրով կարդացել ենք նաև պարսիկ և անգլիացի գրականագետների ու թատերագետների աշխատանքները, որոնք նվիրված են Չեխովի ստեղծագործություններին:

## **ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ**

Ատենախոսության հիմնախնդիրները արտացոլվել են Հայաստանի Հանրապետության գիտական հանդեսներում, ինչպես նաև արտասահմանյան գիտական հանդեսներում (այդ մասին տե՛ս ատենախոսության թեմայով հրատարակված հոդվածների ցանկը):

Ատենախոսությունը նախնական քննության է անցել Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրականության տեսության բաժնում և հանձնարարվել է պաշտպանության:

## **ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ**

Ատենախոսությունը բաղկացած է չորս գլուխներից՝ «Չեխովի երգի-ծական պատմվածքները», «Երգիծանքի դրսևորման առանձնահատկությունները Չեխովի դրամաներում», «Չեխովի՝ մեկ արարից բաղկացած վոդևիլները», «Պոետիկայի հարցեր»:

Վերջում ներկայացվել են եզրակացությունները և օգտագործված գրականության ցանկը: Աշխատանքի ծավալը բաղկացած է 150 համակարգչային էջից:

## **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Աշխատանքի «Ներածություն» բաժնում ընդհանուր գծերով ներկայացվում են հարցի պատմությունը, նյութի ուսումնասիրության աստիճանը, հիմնավորվում է աշխատանքի թեման, բնորոշվում ուսումնասիրության նյութը, արդիականությունը, պարզաբանվում ուսումնասիրության նպատակներն ու խնդիրները:

## **ԳԼՈՒԽ ԱՈՒՋԻՆ ՉԵԽՈՎԻ ԵՐԳԻԾԱՎԱՆ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԸ**

Այս գլխում ուսումնասիրվել են Չեխովի երգիծական պատմվածքները՝ «Խարդախություն», «Անզգուշություն», «Հիվանդախենյայկ համար 6», «Հաստիկն ու նիհարը», «Չինովնիկի մահը», «Քամեւեռն», «Թշնամիներ», «Սորելը» և ուրիշ գործեր: Ուսումնասիրել ենք Չեխովի գործերում հունորի դրսևորման պատճառները, ինչպիսիք են մարդկանց փոխադարձ անհամաձայնությունները, կեղծ հպարտությունը, ինքնահավանությունը և այլն: Այս գլխում ներկայացրել ենք նրա վաղ և հասուն շրջանի երգիծանքը:

Չեխովն իր գործերը սկսեց տպագրել այնպիսի պարբերականներում, որոնք գաղափարազուրկ ու ցածրորակ էին և դրանցում ներկայացված երգիծանքը որակապես թույլ էր և չունեի ճանաչողական արժեք: Դրանց սյուժեները հիմնականում մարդկանց տգիտությունը ծաղրելու մասին էին: Այս պարագայում Չեխովի ու մյուս գրողների միակ տարբերությունը այն էր, որ Չեխովը առավել վարպետորեն էր ներկայացնում իր գրվածքները, որոնք էլ ավետում էին, որ շուտով մի մեծ գրող հմայելու և աշխարհին իր գրչով: Այդ պարբերականները Չեխովի համար փորձադաշտ էին, որոնց միջոցով նա կարողանում էր կատարելագործել իր վարպետությունը: Հենց դա էր պատճառը, որ Չեխովն իր այդ ժամանակաշրջանի գործերը երբեք չվերահիաստարակեց, թեպետ իր առաջին և երկրորդ ժողովածուներում դրանցից մի քանիսը տպագրվել են: Բակներ Բ. Տրավիկը Չեխովի կարճ պատմվածքների մասին ասել է. «Չեխովի կարճ պատմվածքները թերևս ավելի շատ նկարագրական են, քան պատմողական: Նրա վեց հարյուր պատմվածքների մեծ մասում գործողության տեղանքի նկարագրություն է և որևէ իրական նախագիծ չունի: Առհասարակ Չեխովը մեկուսանալու և միայնակ կյանք վարելու բնավորություն ուներ և մարդկանց ուսուցանելու ու դաստիարակելու մասին չէր

մտածում: Նրա պատմվածքները, ռուս այլ գրողների պատմվածքների պես լի են իրապաշտական մանրամասնություններով: Նա երբեք զգացմունքային չի դառնում և հազվադեպ է պատահում, որ բորբոքվի և բուռն զգացմունքներ արտահայտի: Նրա պատմվածքները ավելի շատ խելքից են գալիս, քան զգացմունքից»:<sup>1</sup>

Զեխովն իր պատմվածքների գրելաոճի մեջ ներառեց լակոնական ուճը և ցույց տվեց, թե ինչպես կարելի է մի ծավալուն բովանդակություն տեղավորել կարճ պատմվածքի սահմաններում: Նրա ներմուծած մեթոդը՝ երկար պատմվածքների որոշ մասերի զեղչումը և միաժամանակ մարդկային կյանքի բոլոր կողմերի քննությունը, վերածվեց նոր գրելաոճի, որն էլ իր հերթին ընդօրինակվեց ուրիշների կողմից: Նա ոչ միայն իր պատմվածքներում էր կիրառում այդ ոճը, այլև իր առօրյա խոսքում ու նամակներում, որոնք նույնպես խտացված ու հակիրճ էին: 1880-ականների կեսերից Զեխովի կարճ պատմվածքները և երգիծական թեմաները հիմնավոր փոփոխություն կրեցին: Նա սկսեց ռեալիստական հայացքով քննել կյանքի բարդությունները և հայտնաբերել մարդկանց թշվառության պատճառները: Դրանից հետո այլևս որևէ հետք չմնաց մակերեսային ծաղր ու ծանակի հիման վրա ստեղծված իր նախկին երգիծանքից: Նրա պատմվածքները ողբերգականի և կատակերգականի նրբագույն համադրության արդյունք էին բովանդակությամբ հարուստ, կառուցվածքով ավարտուն և ամբողջական:

Զեխովի արվեստը հոգեբանական արվեստ է, այն տարբերվում է Տոլստոյի, Դոստոևսկու և Մարսել Պրուստի գործերից: Մարդ արարածների անհաղթահարելի օտարումը, միմյանցից հեռանալը և փոխըմբռնման հնարավորություն չունենալը արտացոլելու մեջ ոչ մի գրող չի հասնում Զեխովին, և սա նրա գրեթե բոլոր պատմվածքների բովանդակային առանցքն է կազմում: Զեխովի հերոսները հեռու են նախորդ դասական շրջանի հերոսներից, քանզի այդ շրջանում դասական գրականությունը խորը ճգնաժամ էր ապրում, նրա բոլոր կերպարները, իրենց դասակարգային սահմանները զանց առնելով, խոսում են միևնույն լեզվով, որ իրենց հեղինակի լեզուն է:

Զեխովի որոշ պատմվածքներ սկիզբ են առնում նրա երիտասարդական տարիների կենսափորձից, ինչպիսիք են՝ «Տափաստանը», «Երջանկությունը», «Ձիագողերը» և այլն, որոնց թեման ածանցված է դաշտերում ու տափաստաններում ապրող մարդկանց մշուշապատ երևակայություններից ու պատկերացումներից: Ներկայացվում է նաև այդ տարածաշրջանների գյուղացիների աղքատությունն ու թշվառությունը, նրանց անիրականալի երազանքը այդ իրավիճակից ձերբազատվելու ձգտումը:

Զեխովը իր սկզբնական շրջանի պատմվածքները վերանշակելու համար կիրառում է մոտեցման երկու մեթոդ.

Պատմվածքը ավարտվում է անսպասելի ֆինալով, որը հատուկ է նուվելին: Այս մեթոդը ծանոթ է Գի դը Մոպասանի ժամանակաշրջանից և սովորաբար հիշվում է «Ձարմանալի ավարտ» անունով: Որպես օրինակ կարելի է հիշել «Պատվո շքանշան» պատմվածքը, որում Պուլստիակովը ճաշկերույթի մաս-

---

<sup>1</sup> - تراویک ، باکتر. ب. تاریخ ادبیات جهان. ترجمه عربعلی رضایی. تهران. نشر پژوهش فرزاد. 1994. ص 759  
Տրավիլի Բակեր Բ. Համաշխարհային գրականության պատմություն թարգմ. Արաբալի Ռեզայի. Փաժուհեշ Ֆարզան. հրատարակչուծ. Թեհրան, 1994, էջ 759:

նակցելու համար մի շքանշան է վարձում ու փակցնում իր կրծքին, սակայն ընթրելու ժամանակ նրա դիմաց նստում է իր գործակիցներից մեկը, ով գիտեր, որ նա իրավունք չուներ կրելու այդ շքանշանը: Խեղճ Պուստիակովը, որպեսզի իր գաղտնիքը չբացահայտվի, ստիպված մի ձեռքով ծածկում է շքանշանը, մյուս ձեռքով մեծ դժվարությամբ ճաշում: Վերջում պարզվում է, որ իր գործակցի կրծքին փակցրած շքանշանը նույնպես վարձովի է, և, իհարկե, իր շքանշանից ավելի բարձրածեք: Ավելի զավեշտականն ու հետաքրքիրն այն է, որ Պուստիակովը, փոխանակ այս դեպքից դաս առնի, շարունակ ավստոսում է, թե ինչու ավելի խորը չի մտածել և ավելի բարձրածեք շքանշան չի վարձել, որպեսզի իր գործակցից ավելի բարձր երևա:

Հակառակ ընթերցողի ակնկալիքին, թե պատմվածքը պետք է ավարտվի խանդավառությամբ, դա տեղի չի ունենում: Այս տեսակի պատմվածքը ռուս հռչակավոր գրաքննադատ Ա. Շկլովսկին անվանեց «ոչնչի ավարտ»: Այդ հնարանքը Չեխովի կողմից շատ է օգտագործվել, դրա ցայտուն օրինակներից մեկը «Վրիժառուն» է:

## **ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ** **ԵՐԳԻՃԱՆՔԻ ԴՐԱՆՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՉՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԵԽՈՎԻ ԴՐԱՄԱՆԵՐՈՒՄ**

Այս գլխում շեշտը դրել ենք Չեխովի չորս հայտնի պիեսների՝ «Բալետնու այգին», «Ճայր», «Երեք քույրերը», «Քեռի Վանյան» կերպարների ու միջավայրի վրա: Քննության ենք առել նաև Չեխովի երգիծանքի արարման ընթացքը պայմանավորող հետևյալ հնարանքները, դրանք են՝ տարբեր սիմվոլների օգտագործումը, «մենախոսությունը», «առօրեականությունը», «ժամանակի առկախումը»:

Չեխովի պիեսների երգիծանքի ընդհանուր գիծը մարդկանց իրար հասկանալու անկարողությունը և ընդհանուր հայտարարի չգալն է, անգամ սիրո և ամուսնության մեջ ներքին ու արտաքին միջավայրի փոխազդեցությունը դառնում է մարդկանց ինքնասպանության պատճառ: Այդպիսի օրինակ է Տրոպուլովի և Իվանովի ինքնասպանության փաստը, որ ոչ մի ազդեցություն չգործեցին մյուս ծանոթ կերպարների կյանքի ընթացքի և զգացմունքների վրա: Չեխովի պիեսներում չկա թեմայի կենտրոնացում, կադապար, նախագիծ կամ շարժում, այլ ընդամենը գոյություն ունեն պարզ ու հասարակ տեսարաններ և մեկնաբանություններ: Այդ իսկ պատճառով Չեխովը հայտնի է աշխարհին որպես դրամատիկ գրող: Սա ռուսական ռեալիստական դրամայի բնական արդյունքն է: Ռուս ռեալիստական դրաման հիմնականում կայուն, համգիստ և խաղաղ է: Չեխովը դրանք հասցնում է կատարելության՝ վաստակելով ճշմարիտ դրամայի հեղինակի կոչումը:

Չեխովի թատերգության հերոսները ապրում են թվացյալ ազատության և ժողովրդավարության մեջ, որտեղ հավասարության գաղափարը կեղծիքի և ստի նման մի բան է: Սա համապատասխանում էր նաև մոսկովյան թատրոնի սկզբունքներին, որը դաստիարակում էր այնպիսի դերասանների, ովքեր չպետք է ասողեր դառնային, այլ պետք է կարողանային երևույթները ներկայացնել ընդունված խաղի օրենքներով: Թատերգությունների երկխոսությունները ևս լրիվորեն համապատասխանում են Ա. Չեխովի այն մտքին, թե

մարդիկ միմյանց հանդեպ անտարբեր են, և չկա փոխադարձ ըմբռման հասկացողությունը: Նրանք ոչ ուզում են, ոչ էլ կարող են միմյանց հասկանալ: Բոլորը խոսում են միայն իրենց նախասիրություններից և անտարբեր են ուրիշների արտահայտած կարծիքների հանդեպ: Այսպիսով, երկխոսությունը անկապ արտահայտությունների մի ամբողջություն է, որի հիմքը ոչ թե տրամաբանությունն է, այլ միջավայրի մթնոլորտն ու իրավիճակը: Սա ևս այն ժամանակներում արվեստի նորարարություն էր համարվում, մինչդեռ իրական կյանքում մարդը չի կարող խոսել Չեխովի հերոսների նման: Նրա ստեղծագործություններում իրական և արհեստական կյանքը հավերժական պայքարի և հակասության մեջ են և այդ պատճառով էլ դժբախտությունն ու անպատշաճությունը հասնում են իրենց գագաթնակետին: Չեխովի հերոսները մի կողմից ելք են փնտրում իրենց դժվարություններից ազատելու համար, մյուս կողմից նրանց տգիտությունը պատճառ է դառնում, որ չհայտնաբերեն այդ իրավիճակի գլխավոր պատասխանատուներին, որոնք հենց իրենք են: Իրանցի արվեստաբան Քամրան Ֆանին Չեխովի թատերգությունների փոխադարձ կապի և ազդեցության մասին ասում է. «Չեխովը մարդու իրականի և երևակայականի հակասությունը դրսևորելու համար օգտվում է անուղղակի միջոցներից: Բեմադրության կարևոր դեպքերը տեղի են ունենում բեմից դուրս կամ արարների ընթացքում, և միայն հերոսների միջոցով են բացահայտվում կյանքի այդ անցուղարձերը: Անհատականությունների ներաշխարհը բացատրվում է ինքն իր հետ խոսելու միջոցով: Այսպիսով, երկխոսության մասնակիցները ոչ միայն միմյանց հետ են խոսում, այլև իրենց ինքնամոտիվ կյանքի ստացվածքի հետ, նաև դրամայի ունկնդրի, հանդիսատեսի հետ: Պիեսի հերոսները ունեն կաղապարված մտքեր, որոնք անընդհատ կրկնում են, թեև դրանք բովանդակազուրկ մտքեր են, բայց հախուռն պաթոսով են ներկայացվում: Ժամանակը պաուզայի ձևով Չեխովի թատերգությունների մեջ կանգ է առնում, սա ևս Չեխովի ստեղծագործական առանձնահատկություններից է: Եղանակների փոփոխությունը, երեխաների մեծանալը և մյուս երևույթները, շարժումները վկայում են կյանքի հարափոփոխ իրավիճակների գոյությունը, ինչը ստանում է խորիդրամաշակական արժեք»<sup>2</sup>:

Աշխարհի բոլոր գրողների գործերում սերը առիթմիկ դրսևորում է տալիս, իսկ Չեխովի մոտ սերը հիմնականում միակողմանի է, քանի որ սիրահարները միմյանց չեն հասկանում, ինչպես օրինակ «Ծայ»-ի մեջ Տրեպլովի սերը Նինայի հանդեպ, «Քեռի Վանյայի» մեջ Սոնյայի սերը Աստրովի և «Երեք քույրերի» մեջ այս պլանով Անդրեյի ձախողումները: Արդյոք որևէ մեկը լսու՞մ է «Բալենու այգի» պիեսի Ֆիրսի խոսքերը, կամ նույն գործում Տրոֆիմովը կարևորություն տալի՞ս և Լոպախինի խոսքերին թե ոչ:

Որպես օրենք՝ Չեխովի կերպարները անձնական սխալների և հասարակական դժվարությունների հանդեպ խեղճ են և անկարող: Նրանք միայն փորձում են իրենց արդար ձևացնել, հեռանալ իրականությունից և իրենց կարճ խելքով փախչել սպասվող փոթորիկից:

<sup>2</sup> - فانی، کامران. سیری در زندگی و نمایشنامه های چخوف. مجله ادبیستان فرهنگ و هنر. شماره 54. 1994. ص 32  
 Քամրան Ֆանի, Ա. Չեխովի կյանքի և պիեսների վերլուծական ակնարկ. Ադաբեստան պարբերական. թիվ 54, 1994, էջ 32:



Չեխովի երգիծանքի մեջ հմտորեն օգտագործվում են այս երևույթի հակասությունները: Օրինակ՝ «Ճայը» թատերգության մեջ գոյություն ունեն թափառականներ, ովքեր երջանկություն են փնտրում, իսկ ոմանք էլ, հաշտվելով իրենց ճակատագրի հետ, ոչ մի նոր գործ չեն ձեռնարկում:

«Բալենու այգու» մեջ հիմնական կերպարները կամ տանուտեր են, կամ ծառա. հետաքրքիրն այն է, որ մեծահարուստը իր ծառայի հանդեպ առավելություն չունի, իսկ ծառաները, իրենց հերթին, ծաղրում են իրենց տերերին:

«Քեռի Վանյայի» կերպարները հուսահատ են, և անկախ այն բանից, որ նրանք անգործ են, թե աշխատող, միևնույն է, փակուղուց դուրս գալու ելքեր չեն գտնում:

«Երեք քույրերի» մեջ կան երկու հակադիր խմբեր, որոնք ռոմանտիկ և քաղաքավարի են, կամ իրապաշտ և անմակարդակ: Դրանցից ոչ մեկը չի կարողանում մի գործ նախաձեռնել, որովհետև բոլորն էլ խարխափում են թյուրիմացության մեջ:

«Բալենու այգին» պիեսը Անտոն Չեխովը գրել է 1903 թվականին՝ 1905-ի հեղափոխությունից երկու տարի առաջ: Այս դրաման հին և նոր ժամանակների խորհրդանիշն է՝ այն պահը, որը մարդու համար երեկվա և վաղվա բախման կետն է: Դրամայի կենսահիմքը առնված է անընդհատ առաջ շարժվող ժամանակի հոսքից, և քննության առնվող գործի հեղինակը փորձում է իր հերոսների համար վաղվա օրվա մեջ գործելու տեղ բացել, քանզի վաղվա օրը պատկանում է նոր մարդկանց: Ժամանակային այս կատեգորիան օգտագործելով՝ դրամատուրգը նպատակ ունի հերոսների և դեպքերի առնչությունների միջոցով ցույց տալ վերջինիս դրսևորման պատմականությունը: «Պիեսի հեղինակը իր հերոսներին ընտրել է ելնելով սեփական փորձառությունից և կյանքի պահանջներից: Չեխովը նրանց հավաքել է մի ցուցադրահում, որպեսզի հետագայում մեկ առ մեկ ցուցադրի նրանց»<sup>3</sup>:

Չեխովի հերոսները հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչներ են՝ հասարակ մարդիկ, ազնվականներ և ընդհանրապես բարձր խավի ներկայացուցիչներ: Նրա շեշտադրումները հիմնականում հասարակ մարդկանց կյանքից են գալիս, որով նպատակ է ունեցել ցույց տալ կյանքի փոփոխությունների արդյունքում առաջացած տխուր անցուդարձները: Չեխովի «Բալենու այգին» պիեսը միայն ծիծաղ առաջացնող կոմեդիա չէ: Բեմի և դերակատարների կեցվածքը այնպիսին է, որ հանդիսատեսը հայտնվում է ծիծաղի և ցավի հակասական իրավիճակների արանքում: Չեխովն իր սուր երգիծանքով զգաստացնում է հանդիսատեսին և փորձում է նրա ուշիմությունը գրավել: Սա գալիս է նրա երգիծանքի ներքին պահանջներից:

«Միխայլովը այն կարծիքին է, որ հանդիսատեսը երբեք իր և Չեխովի գրվածքների մեջ հեռավորություն չի զգում, որովհետև նա գրել է այնպես, ինչպես իրական կյանքն է թելադրում»<sup>4</sup>:

<sup>3</sup> -ملشینگر، زیگفرید، تاریخ تئاتر سیاسی. ترجمه سعید فرهودی. تهران انتشارات سروش. 1998. جلد دوم. ص 131/

Զիգֆրիդ, Մելչինգեր, Քաղաքական թատրոնի պատմություն, պարսկ. թարգմ. Սաիդ Ֆարհուդի. Թեհրան. Սորուշ հրատարակչություն. 1998 էջ. 131.

<sup>4</sup> -Зайцев Д., С. Русская литература в вопросах и заданиях. Москов, Владос. 2001: 110

Դ.Ս.Ջայցեվ, Ռուս գրականություն. Մոսկվա. Վլադոս հրատարակչություն. 2001 էջ. 110.

Այս դրամայում ուտելը, խմելը և գրուցելը կարևոր գործոններ են: Չեխովի կարծիքով կյանքը սրանցով ավելի կատարյալ է դառնում: Նա միշտ հակված է ներկայացնելու սովորական դեպքեր և վարք ու բարքեր, որոնք հատուկ են յուրաքանչյուր մարդու կյանքին:

«Բալենու այգի» պիեսի ժանրը կատակերգությունն է, բայց ոչ այն կատակերգություններից, որոնք միայն հանդիսականին ծիծաղեցնելու նպատակ են հետապնդում: «Բալենու այգի» պիեսի հերոսները թե անճարակ են և թե ունեն դրական կողմեր, սա լրիվորեն տեղավորվում է երգիծական դրամաների հերոսների կերպարի մեջ:

Չեխովի հերոսները կյանքի հիմնական խնդիրների պարագայում առնչվում են միմյանց հետ: Նրանց երբեմնի լռությունը ևս համարվում է զիջում, որը բխում է անհամբերությունից և հուսաբեկումից և փաստում է նրանց օտարումը իրականությունից: Նրանք տեսնում են իրենց անցնող կյանքի քայքայումը, բայց փախչելով իրականությունից չեն ուզում դրան հավատալ:

Չեխովի պիեսներում վարպետորեն ներկայացվում են կերպարների կյանքի դժվարություններն ու հոգսերը՝ միաժամանակ նման կյանքի շարունակման հնարավորությունը կասկածի տակ առնելով, ինչը հին հասարակարգի քայքայումն է նախատեսում: Նա իր այս պատկերացումները ներկայացնում է շատ նրբորեն և խորիմացորեն: Չեխովի պատկերներում հստակորեն երևում են հին կյանքից հրաժարվելու դիմադրությունը և ավստսանքը անցյալից ու կյանքի հանդեպ, նաև պասիվությունը, տխուր տրտուները, անգամ հույսի նշույլները, որոնք հանդիսատեսին ստիպում են մտածել:

«Բալենու այգին» Ռուսաստանի այդ ժամանակահատվածի մտավորականության կարապի երգն է և հասարակական արձատական փոփոխությունների նախերգանքը: Այս պիեսում Լոպախինը ներկայացնում է մի դասակարգ, որն ուզում է փոխարինել Անդրեևնայի գլխավորած և հասարակությունից չբացող մի այլ դասակարգի, իսկ պիեսի միջավայրից դուրս ընթացող դեպքերը իրենց խորը ազդեցությունն են թողնում հերոսների անցուղարձերի վրա: «Բալենու այգին» պատմականորեն մոտ է Ռուսաստանի հեղափոխության շրջանին և ունի նախատեսման հզոր ներուժ: Չկա մի ուրիշ գործ, որում Չեխովի պատկերացումները՝ կապիտալիստական աշխարհի անկման վերաբերյալ, այդքան կայացած և արտահայտված լինեն: Այս դրամայում ժամանակը դանդաղ է ընթանում, և կերպարների երկխոսությունները ամբողջանում են ընդմիջումների միջոցով: Ընդմիջումներ, որոնք ներկայացնում են տարբեր ժամանակաշրջաններ, և հեղինակը չի թողնում, որ դրանց ամբողջացումը կատարվի բռնազբոսիկ կերպով: Հենց այստեղ էլ երևում է «Բալենու այգի» և «Երեք քույրեր» գործերի տարբերությունը:

Չեխովի հերոսները դյուրահավատ, հասարակ մարդիկ են: Նրա կարծիքով սա է թատրոնի առաքելությունը և սա պատճառ է դարձել, որ ամբողջ աշխարհում Չեխովին հիշեն որպես տաղանդավոր գրողի, որը չի մտածել հերոսներ ծնելու մասին, այլ իր պիեսները կառուցել է մարդկանց ներքին հակասությունների հիման վրա՝ գրավելով հանդիսականի ուշադրությունը:

Չեխովն ինքը պնդել է, որ «Երեք քույրերը» թատերգությունը կոմեդիա է, և դրա վառ ապացույցներից է Չեբուտիկինի կերպարը: Նա ևս երազկոտ է և կարծում է, որ իր արտահայտած մտքերը պետք է ընդունեն որպես նշանավոր փիլիսոփայի կարծիք:

Այս թատերգության հերոսները ափսոսուն են այնպիսի անցյալի համար, որն այլևս գոյություն չունի և իրենց հույսը դրել են մի վերացկան գեղեցիկ ապագայի վրա, որը դեռ չի եկել ու չի էլ գալու: Իրականության մեջ դրանք ժամանակից դուրս են, ոչ անցյալին են պատկանում, ոչ ապագային, քանի որ հնարավորություններով սահմանափակ են, չեն կարող ստեղծել իրենց երագած կյանքը: Չեխովի կերպարները կենտրոնացում չունեն և իրարից հեռու են, և հենց այդ պատճառով նրանք անզոր են բարեբեր ապագայի հիմքերը կերտելու մեջ:

Չեխովի կատակերգության մեջ կերպարները իրենց հարաբերությունների մեջ թույլ և անկայուն են, ինչը դառնում է երգիծանքի պատրվակ: «Երեք քույրեր»-ում այս հարաբերությունը ի հայտ է գալիս մի կողմից՝ մոլորվածությամբ և շփոթվածությամբ, մյուս կողմից՝ անհաղթահարելի դատապարտվածությամբ: Ուստի «երեք քույրեր»-ի աշխարհը դառնում է ծայրահեղ սիմվոլիկ: Այս առումով Չեխովի հերոսները՝ առանց ներկա կյանքի պահանջները հասկանալու, համառորեն շարունակում են իրենց անիմաստ ճանապարհը: Այս «սիմվոլիկ» աշխարհը դառնում է բոլորովին իրարից տարբեր երկաշխարհների սահմանագիծ՝ մեկը ռուսական ռազմականացված աշխարհն է, մյուսը քաղաքակիրթ եվրոպականը, որ չափազանց հեռու է նախորդից: Պիեսուն հանդես եկող երեք քույրերը ինչ որ չափով տարբերվում են մյուս հերոսներից (զինվորականներ, փոստի աշխատակիցներ և այլք), փորձում են օտարվել վերջիններից, անգամ բաժանվելով իրենց հոր ճնշող իշխանությունից, հայտնվում են մի այլ աշխարհում, որն իրենց համար ավելի վտանգավոր ու վնասակար է: Սա չեխովյան աբսուրդի դրամային բնորոշ ամենախնքնատիպ դրսևորումներից է:

«Քեռի Վանյա» թատերգությունը Չեխովի նախորդ պիեսների նման մի խումբ մարդկանց ճակատագիրն է, ովքեր կամազուրկ են և իրենց հույսերը դրել են ապագայի վրա, որը դարձյալ մշուշոտ է, քանզի իրենք որևէ լուրջ քայլի չեն դիմում իրենց կյանքը բարելավելու համար: Սերերյակովը, ով մի կյանք նվիրվել է կրթությանը և գիտությանը և այժմ պետք է իր կուտակած փորձն ու գիտելիքը ծառայեցնի ժողովրդին, և որպես մտավորական օգնի հասարակական հարցերի լուծմանը, մինչդեռ ժողովրդի գլխին դառնում է պատուհաս և ամեն օր բախվում է Վինիցկուի հետ, ով հենց ինքը՝ Քեռի Վանյան է: Այս հակասության մեջ անգամ կյանքի սպառնալիք է հնչեցվում՝ Սերերյակովի հասցեին, և նա թողնում է քաղաքը: Չեխովը, ստեղծելով մտավորական խառն ճերկայացուցիչ Սերերյակովի կերպարը, քննադատում և ծաղրում է մտավորականությանը: Սա այն խավն է, որը շատ ինքնահավան է և մեծամիտ և հասարկությանը ոչ միայն չի օգնում, այլև խանգարում է: Այս մտավորականը անգամ փոխում է օրվա սովորությունների ռիթմը և խանգարում է նախաճաշի, ճաշի և ընթրիքի մատուցման կարգը, անգամ այն դեպքում, երբ ուրիշները հավանություն չեն տալիս: Չեխովը, Սերերյակովին քննադատելով, քննադատում է այն մտավորականներին, ովքեր տգրուկի հատկություն ունեն, և ոչ մի բողոք չի փոխում նրանց էությունը: Սերերյակովները տիպարներ են, որոնք ապրում են ուրիշի հաշվին: Վինեցկին և Սոնյան կարծես թե ստեղծվել են այսպիսի տգրուկներին ծառայելու համար: Նրանք ևս կորցրել են իրենց ինքնությունը և զուրկ են առօրյա կյանքը փոխելու կարողությունից: Վինեցկին

Քեռի Վանյան, անբանի մեկն է, ով միշտ խոնարհ է և անգիտակից, և ծաղրում է ուրիշին, անգամ թե նա իր հարազատ մայրն է:

Սերեբրյակովը և իր կինը այլևս չեն կարողանում այդ շրջապատում ապրել, և մեկնում են քաղաք: Նրանց միջև հաշտություն է ստեղծվում և հետաքրքիր է, որ Սերեբրյակովի համար նույնիսկ թռչակ են նշանակում: Մյուս կողմից Չեխովի դրամաներում մենք վկան ենք դառնում սիրահարության այնպիսի դեպքերի, որոնք հիմնականում միակողմանի են: Այստեղ հատկապես երևում է Չեխովի իրական վարպետությունը. Քեռի Վանյան սիրահարվում է Ելենա Անդրեևնային, իսկ Ելենան սիրում է ոչ թե իր ամուսնուն, այլ բժիշկ Աստրովին: Սոնյան էլ է սիրում բժշկին, իսկ վերջինս էլ ցանկանում է սիրել Ելենային: Չեխովը ներկայացնելով այս իրավիճակները, երգիծանքից բացի նպատակ ունի նաև ցույց տալ մարդկանց մշուշոտ հայացքները անգամ սիրո հանդեպ: Այսպիսի դրվագների հանդիպում ենք նաև Չեխովի մյուս գործերում: Ելենան իրեն դժբախտ է զգում և իր երիտասարդ կյանքը ու գեղեցկությունը նվիրել է մի ծերուկի, որն իրեն մեծ գիտնական է համարում: Նա ընկել է մի խոր վիհի մեջ, որտեղից անհնար է փրկվել: Ելենան այդ իսկ պատճառով իր փոխադարձ զգացմունքների բացը և սիրո կարոտը լրացնում է Աստրովի հետ հարաբերության մեջ՝ առաջ բերելով տագնապներ ու վախ: Ելենա Անդրեևնան այս պիեսում չի նտածում աշխատանքի մասին, նա միայն հպարտանում է իր գեղեցկությամբ և գերում է բուլրին: Չեխովը փորձում է թափանցել նաև այս արտաքին գեղեցկության տակ թաքնված մարդու զգացմունքների մեջ, համեմատություն կատարելով Ելենայի և Սոնյայի միջև: Ելենան գեղեցիկ է, բայց ներքինով՝ անհոգի և անզգա, իսկ Սոնյան թեև բարետես չէ, բայց ունի մաքուր սիրտ և սիրո զգացմունք:

Չեխովը մարդկային այս հավիտենական հակադրությունը ներկայացնում է սուր երգիծանքի միջոցով:

«Ճայը» պիեսը գաղափարական մարդկանց ներկայացումն է, որով էլ արտացոլում է Չեխովի ներաշխարհը: Գրողներ Տրիգորինը, Տրիպլովը և բժիշկ Դոմնը իմի են բերում Չեխովի վերելքներով և վայրէջքներով հագեցած կյանքը: Չեխովը այս երեքի միջոցով արտահայտել էր իր պատկերացումները գրականության և նոր արվեստի մասին իր տեսակետները: Այսպես, երիտասարդ դրամատուրգ Տրեպլովը ուզում է, որ ընթացիկ պիեսների ձևաչափը փոխվի, քանի որ դասական դրամաները այլևս չեն բավարարում ժամանակակից հանդիսատեսին: Անտոն Չեխովի այս պիեսում խոսվում է նաև սիրո մասին ( Տրեպլովի սերը Նինայի հանդեպ, Լինայի սերը Տրիգորինի հանդեպ, Իրինայի սերը Տրիգորինի հանդեպ, Մաշայի սերը Տրեպլովի հանդեպ, Մեդվեդենկոյի սերը Մաշայի հանդեպ, և Պոլինայի սերը բժիշկ Դոմնի հանդեպ), մինչդեռ «Ճայը» պիեսի կերպարները ինչպես արվեստում, այնպես և սիրո մեջ ձախողված են: Նրանք տանջվում են տխուր կյանքի միապաղաղությունից և միմյանց չհասկանալուց:

Անվանի դրամատուրգը հատուկ գաղափարախոսություն չի քարոզում, այլ իր կերպարների միջոցով ցուցադրում է այնպիսի հերոսներ, որոնք թուլամորթ են և դիմացինի կարեցցանքն են հայցում: Կասկածից վեր է, որ Չեխովը իր պիեսի կերպարներին չի սիրում, նրանց հերոս չի համարում և կասկածում է, որ նրանք հասարակական այդ փոփոխությունների հորձանու-

տուն կփրկվեն: Նա պարզապես դառն հեզմանքով իր ներկայացրած կերպարներին հասկացնում է, որ «ապրել չգիտեն»:

Այս մոտեցումն ինքնին շատ պարզ է ու հստակ, ունի նաև խորքային իմաստ: Դա ուղղված է նրանց, ովքեր երջանիկ ապրելու գաղտնիքը չգիտեն, ծիծաղելի վիճակում են գտնվում և դժվարանում են գտնել իրենց կյանքի ճիշտ ուղին: Այդ է Չեխովի երգիծանքի և կարեկցանքի հիմքը, այդ է նաև Չեխովի ստեղծագործություններում դրական հերոսների իսպառ բացակայության պատճառը:

Չեխովի կարծիքով սա է թատրոնի առաքելությունը և սա պատճառ է դարձել, որ ամբողջ աշխարհում Չեխովին հիշեն որպես տաղանդավոր գրողի: Չեխովի «Բալենու այգին», «Ճայր» և «Երեք քույրեր» պիեսները արագորեն իրենց տեղը գտան համդիսատեսի գիտակցության մեջ: Դա կատարվեց գրողի կենդանության օրոք և նա լսեց իր գրուցակիցների արձագանքները:

### **ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐ**

#### **ՉԵՒՍՎԻ ՄԵԿ ԱՐԱՐԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ՎՈՂԵՎԻԼՆԵՐԸ (ԿԱՏԱԿՆԵՐ)**

Այս գլխում անդրադարձել ենք Չեխովի այն կարճ պիեսներին, որոնք սովորաբար անվանվում են «մեկ արարով պիես» կամ «վոդևիլ»: Այդպիսի պիեսներն են «Մայրուղու վրա», «Ծխելու վնասները», «Կարապի երգը», «Արջը», «Խնամախոսը», «Տատյանա Ռեպինան», «Պարտադրյալ տրագեդիան», «Ամուսնություն»-ը, «Տարեդարձի տոնակատարությունը», «Դատավարության նախկին գիշերը»:

Չեխովը իր կարճ երգիծական պիեսների միջոցով նոր ոճ հաղորդեց իր սիրելի թատրոնին, որի կարիքը ուներ, քանի որ 19-րդ դարի 80-ական թվականներին Մոսկվայի թատրոնը դեռ պահպանում էր հին ավանդույթները, փակված էր հնի մեջ և հեռու էր նորարարությունից: Չեխովի ստեղծած այս նոր ոճը ինչ-որ տեղ պահպանում էր կատակերգության ավանդույթներ՝ միևնույն ժամանակ ծիծաղեցնելով հաճույք պատճառում հանդիսատեսին: Չեխովը սրանցով ներկայացրեց ռուսական միջավայրին բնորոշ թեմաներ և ընդօրինակելով ֆրանսիական վոդևիլներին՝ ստեղծեց տիպիկ ռուսական ոճ: Ռուսաստանի ապրելակերպի և իր զգացումների վրա հենվելով՝ Չեխովը կարողացավ ստեղծել նորը, որով հաջողությամբ միաձուլեց ողբերգության և կատակերգության տարրերը: Նա, ծաղրելով ավանդական բանաձևերը՝ սեր, ամուսնություն, օժիտ, փոխեց վոդևիլյան ոճը: Չեխովի կատակերգությունները նաև ժամանակակից թեմաներին են վերաբերում, նա ծաղրում է այդ ժամանակների ֆեմինիստական պնդումները («Արջը»), բացահայտում միջին խավի սահամանափակ մտածելակերպը և նյութապաշտությունը («Ամուսնություն» և «Պարտադրյալ տրագեդիա»), նկարագրում անմարդկային վերաբերմունքը և բանկային համակարգի ղեկավարների դաժանությունն ու մեծամտությունը («Տարեդարձի տոնակատարությունը»):

Խորությունը և բարդությունը Չեխովի կարճ պատմվածքներում հիմնականում չի գնահատվել այնպես, ինչպես լայն կտավի պիեսներում, թեև Չեխովը դրանք անվանել է «վոդևիլ» և դրանք ապագա հեղինակների համար, ինչպիսիք են Փինթերը և Բեքեթը, ստեղծագործելու հիմք են ծառայել: Հավա-

նաբար, կարևորը այս կարճ պատմվածքների համար այն է, որ կամուրջ հանդիսացավ ավելի լավ հասկանալու ու վերլուծելու նրա մյուս երկերը: Իր ստեղծագործություններում Չեխովը կարողանում է ճիշտ պլանավորել դերերի և տարածության բաշխումը, որը ցույց է տալիս տասնհինգերորդ դարում նրա ստեղծագործությունների զարգացման աստիճանը: Ինչպես նաև մեկ արարով պիեսները ստեղծելիս Չեխովի համար որպես հաջողության միջոց է ծառայել մարդկանց սոցիալական հոգեբանության վերլուծությունը, փիլիսոփայական խորքը, որոնք շատ ավելին էին, քան առաջարկում էին նրա ժամանակակիցները: Այս առումով, կարող ենք նշել նաև տղամարդու և կնոջ միջև առկա հարաբերությունները, որոնք իրենց արտահայտությունն են գտել «Խնամախոսություն» և «Արջը» պիեսներում հանձինս Վարյայի և Լուպախինի հարաբերությունների:

Նույնը տեսնում ենք նաև «Յարսանիք» պիեսում, որտեղ Չեխովը Փուշկոստի կերպարի միջոցով քննադատում է այն հասարակությանը, որը կեղծ և սեթևեթ իդեալների պատճառով հայտնվել է անտանելի միջավայրում: Այս պիեսը նույնպես շեշտում է մարդկանց ժիծաղելի բարքերը նման պայմաններում:

Չեխովը իր մեկ արարով պիեսներում ճշգրտորեն նկարագրել է, թե մարդիկ ինչպես են կառչել անցյալի սովորույթներին:

Կերպարների դերերը կարճ և երկար պիեսներում ի հայտ են բերվում հասարակական հավաքներում, ինչ-ինչ կարևոր արարողություններում, ինչպիսիք են հարսանիքները, տոնախմբությունները և տարեդարձները:

Պիեսների դեպքերը սովորաբար հակադրվում են պիեսների անվանումներին: «Ծխելու վնասակարության մասին» գործում պիեսի անունը հիշեցվում է բանախոսության ձևով, որի մասին պիեսում ոչ մի հիշեցում չկա, պարզապես հերոսը ծխելով հանդիսատեսին պատմում է իր թշվառ կյանքի մասին: Նույնը կրկնվում է նաև «Կարապի երգը» պիեսում: Չեխովի կարճ պիեսները հաճախ սկսվում են մեկ մուտքով և չունեն հստակ ավարտ: Բեմից դուրս կերպարները ինչպես «Նյուխին»-ի կինը կամ նախկինում մահացած կերպարներ, օրինակ «Պոպովա» զույգը՝ «Արջը» պիեսում, որոնք իրենց ազդեցությունն ունեն իրադարձությունների վրա:

Կերպարներն այս վոդևիլներում աննշան բաներից տապալվում են, հաճախ էլ հպարտությամբ են իրենց տեսակետը պարտադրում ուրիշներին, ճարպիկ ձևով փոխում են իրենց գաղափարները և մոտեցումները, եթե դրանք բխում է իրենց շահերից:

Չեխովը օգտվելով տեխնիկական բառերից՝ ցույց է տալիս իր լիարժեք գիտելիքները առևտրի, շահույթի և այլնի մասին. օրինակ «Վսուն» և «Սմիթ» հրացանների բանավեճը «Արջը» պիեսում, որսորդական շների անատոմիան «Խնամախոսը» պիեսում: Չեխովը կերպարների ֆիզիկականից անցնում է ժեստերի լեզվին: Օրինակ են հանդիսանում այն հերոսները, ովքեր թույլ են, հազում են, դեմքի ներվային միմիկաներն են ցույց տալիս, կամ պառկում են բազմոցին: Այս հատկանիշներին հանդիպում ենք նաև Չեխովի երկար պիեսներում, օրինակ՝ «Ճայլ» պիեսում Մաշայի ուտերը թմրում են, «Երեք քույրերը»-ում Օլգան մշտական գլխացավ ունի, «Բալենու այգում» Ասմիրովը խռնփացնում է և այլն:

Բժիշկը, գրողը, գեղագետը, փիլիսոփան, հումանիստը, ծաղրածուն և վերստուգիչը, որոնք հայտնվում են Չեխովի վոդկիներում, առիթ էին, որպեսզի նա մուտք գործեր Մոսկվայի հրապուրիչ թատրոնի մեծ աշխարհը, որը թե՛ քաջալերում էր Չեխովին և թե՛ նսեմացնում: Ռուսականացված ֆրանսիական վոդեվիլները, որ Չեխովը բեմադրում էր 19-րդ դարի 80-ական թվականների Մոսկվայում, շատ սիրվեցին. երիտասարդ Չեխովը դրանք առատորեն տպագրում էր երգիծական և գրական տարբեր պարբերականներում: Վոդկի գրելը Չեխովի համար հեշտ և հաճելի գործ էր և հենց իր պատմվածքների մասն դրվածքը նրան և հեղինակություն էր բերում և գումար:

